Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն – 11

ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ԳՐԻԳՈՐ ԴԱՏՈՒՄՅԱՆԸ

Ավագանու 15 անդամներից նիստին մասնակցում էին 10-ը՝ Տիգրան Գալստյանը, Ազատ Զաքարյանը, Աշոտ Հունանյանը, Վահագն Մկրտչյանը, Վահե Մովսիսյանը, Նավասարդ Պետրոսյանը, Արմենակ Սարգսյանը, Բաբկեն Վարդանյանը, Հայկ Վարդանյանը, Սարիբեկ Օվոյանը:

Նիստին մասնակցում էին նաև՝ համայնքի ղեկավարի տեղակալ Վարդան Սաֆարյանը, աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Արմեն Մնացականյանը, ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շանթ Վահանյանը, աշխատակազմի գլխավոր մասնագետ-իրավաբան Սամվել Սահակյանը:

1. Միաձայն հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Աշտարակ քաղաքի 2017 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
/Զեկուցող՝ Շ. Վահանյան/
3. Աշտարակ քաղաքի 2017թ. բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին:
/Զեկուցող՝ Շ. Վահանյան/
4. Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին:
/Զեկուցող՝ Շ. Վահանյան/
5. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող որոշ հողամասեր կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:
/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/
6. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող որոշ գյուղատնտեսական նշանակության հողամասեր աճուրդ-վաճառքով և ուղղակի վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:
/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/
7. 514-039 ծածկագրով 0.2213հա գյուղատնտեսական նշանակության հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:
/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/
8. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող բնակավայրերի նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:
/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/
9. Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված գյուղատնտեսական նշանակության հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:
/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

10. Ըստ դատավճռի քաղաքացու սեփականության իրավունքը ճանաչելու մասին:

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

11. Աշտարակ համայնքի ավագանու 25.07.2017թ. N 5-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

12. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի կամավոր խնդիրների, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունների և դրանց լուծման իրականացման կարգը սահմանելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

13. Աշտարակ համայնքում ընտանի կենդանիներ պահելու և հաշվառելու կանոնները հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

14. Աշտարակ համայնքի ավագանու 08.10.2015թ. թիվ 1-Ա, 21.12.2015թ. թիվ 8-Ա, 28.12.2015թ. թիվ 1-Ա, 13.12.2016թ. թիվ 8-Ա որոշումների քվեարկությունները մասնակի անվավեր ճանաչելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

15. Աշտարակ համայնքի ավագանու 25.04.2008թ. թիվ 12/1-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

16. Աշտարակ համայնքի ավագանու 13.12.2016թ. թիվ 1-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին:

/Զեկուցող՝ Շ.Վահանյան/

Համայնքի ղեկավարի կողմից ներկայացված օրակարգի վերաբերյալ որոշակի պարզաբանումներ ցանկացան լսել Ս. Օվոյանը և Ա. Սարգսյանը: Հարցերին պատասխանեց Թովմաս Շահվերդյանը:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն - 2</u> - Աշտարակ քաղաքի 2017 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին

Զեկուցումով հանդես եկավ և փոփոխության անհրաժեշտության մասին պարզաբանումներ տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շանթ Վահանյանը:

Զեկուցման վերաբերյալ նյութերն աղյուսակների տեսքով կցվում է արձանագրությանը:

Քննարկվող հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ և զեկուցողին հարցեր ուղղեց Սարիբեկ Օվոյանը:

Բարձրացված հարցերին պատասխանեց և լրացուցիչ պարզաբանումներ տվեց համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանը:

Քվեարկության արդյունքում <u>ձեռնպահ էր Ս. Օվոյանը:</u>

9 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն - 3</u> - Աշտարակ քաղաքի 2017թ. բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին

Հարցը ներկայացրեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շ. Վահանյանը:

Նա առաջարկեց համաձայնություն տալ բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից, ըստ անհրաժեշտության միջոցներ հատկացնել և դրանք ուղղել ֆոնդային մաս, առաջացած ծախսերը ֆինանսավորելու համար:

Այս հարցի վերաբերյալ ևս իր նկատառումները հայտնեց Ս. Օվոյանը:

Որոշակի պարզաբանումներ տվեցին Շ. Վահանյանն ու Թ. Շահվերդյանը:

Քվեարկության արդյունքում <u>ձեռնպահ էր Ս. Օվոյանը:</u>

9 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն -4 - *Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին*

Օրակարգային հերթական հարցը ներկայացրեց Շանթ Վահանյանը:

Նա նշեց, որ առաջարկվում է գույքահարկի և հողի հարկի մասով արտոնություն տալ 18 սեփականատիրոջ:

Արտոնության գումարը գույքահարկի մասով կազմում է 362.026 ՀՀ դրամ և հողի հարկի մասով՝ 212.070 ՀՀ դրամ:

Զեկուցողին հարցեր տվեցին և պարզաբանումներ ստացան Արմենակ Սարգսյանն ու Սարիբեկ Օվոյանը:

Քվեարկության արդյունքում որոշումն ընդունվեց միաձայն:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն -5 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող որոշ հողամասեր կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Արմեն Մնացականյանը:

Զեկուցողն առաջարկեց համաձայնություն տալ մրցույթ հայտարարելու կառուցապատման իրավունքով 088-025 և 073-007 ծածկագրերից համապատասխանաբար 47քմ և 4834քմ հողատարածքների համար, մեկ քմ-ի մեկնարկային գին սահմանելով՝ 47քմ-ի համար 200 ՀՀ դրամ և 4834քմ-ի համար 50 ՀՀ դրամ:

Հարցի հետ կապված ելույթ ունեցան և զեկուցողին հարցեր ուղղեցին Վ. Մովսիսյանը, Ս. Օվոյանը /մեկնարկայինների տարբերության մասին/ և Վ. Մկրտչյանը:

Հարցերին պատասխանեցին Ա. Մնացականյանն ու Թ. Շահվերդյանը:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն -6 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող որոշ գյուղատնտեսական նշանակության հողամասեր աճուրդ-վաճառքով և ուղղակի վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին*

Հարցը ներկայացրեց Արմեն Մնացականյանը:

Նա նշեց, որ աճուրդ-վաճառքով ներկայացվող երեք միավոր հողակտորները /1.01205հա, 0.04815հա, 0.0348հա/ գտնվում են Աշտարակի տեղամասի 859-221 ծածկագրում: Աճուրդ-վաճառքի մեկնարկային գին է առաջարկվում կադաստրային արժեքի 100%-ը:

Զեկուցողին հարցեր տվեց և պարզաբանումներ ստացավ Սարիբեկ Օվոյանը:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն -7 - *514-039 ծածկագրով 0.2213հա գյուղատնտեսական նշանակության հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին*

Արմեն Մնացականյանը զեկուցման մեջ նշեց, որ ՀՀ Կառավարության 2006թ. սեպտեմբերի 7-ի N 1398-Ն որոշմամբ 514-039 ծածկագրով հողամասը /0.2213հա/ փոխանցվել է որպես ֆիզիկական անձի սեփականություն, սակայն քաղաքացու խնդրանքով 1998թ. /որոշում N 30, 21.05.1998թ./ այն հետ է վերցրվել :

Հիմք ընդունելով ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ նախագահի 01.06.2010թ. N 186-Ն հրամանը, առաջարկվում է նշված վարելահողը /հատակագիծը կցվում է/ համարել համայնքային սեփականություն:

Զեկուցողին հարցեր չտրվեցին:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն -8</u> - Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող բնակավայրերի նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին

Օրակարգային 8-րդ հարցը ևս ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը:

Նա նշեց, որ օտարման ենթակա հողամասերը գտնվում են 135-009 և 073-007 ծածկագրերում /չորս միավոր/:

Զեկուցողին հարցեր տվեցին Վ. Մովսիսյանն ու Ս. Օվոյանը:

Ա. Մնացականյանի պատասխանից հետո լրացուցիչ պարզաբանումներ տվեց նաև համայնքի ղեկավարը:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն - 9</u> - Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված գյուղատնտեսական նշանակության հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Արմեն Մնացականյանը:

Նա առաջարկեց համաձայնություն տալ համայնքային սեփականություն ճանաչելու 859-210 ծածկագրից 0.0107հա պտղատու այգի /հնդավոր/, 859-211-ից 0.0348հա պտղատու այգի, 859-214 և 859-215 ծածկագրերից 0.09495հա ընդհանուր մակերեսով վարելահողերը /հատակագծերը կցվում է/:

Զեկուցողին հարցեր ուղղեց Ս. Օվոյանը:

Պատասխաններ հնչեցրեցին Ա. Մնացականյանն ու Թ. Շահվերդյանը:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն -10</u> - Ըստ դատավճռի քաղաքացու սեփականության իրավունքը ճանաչելու մասին

Զեկուցող Ա. Մնացականյանը նշեց, որ հիմք ընդունելով առկա դատավճիռը, առաջարկվում է Աշտարակ քաղաքի <Արա-2> թաղամասի 15-րդ փողոցի N 14 հասցեում գտնվող /ծածկագիր՝ 420-007/ 600քմ տնամերձ հողամասի նկատմամբ ճանաչել Սերյոժա Հովհաննեսի Կարապետյանի սեփականության իրավունքը:

Զեկուցողին հարցեր տվեցին Ս. Օվոյանն ու Ա. Սարգսյանը:

Քվեարկության արդյունքում ընդունվեց միաձայն որոշում:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն -11</u> - Աշտարակ համայնքի ավագանու 25.07.2017թ. N 5-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

Հարցը ներկայացվեց Ա. Մնացականյանի կողմից:

Նշվեց, որ անհրաժեշտություն է առաջացել հիշյալ որոշման մեջ 9քմ-ն փոխարինել 14քմ-ով:

Զեկուցողին հարցեր տվեցին և պարզաբանումներ ստացան Ս. Օվոյանն ու Ա. Սարգսյանը:

Քվեարկությանը չի մասնակցել Աշոտ Հունանյանը:

9 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 12 - *Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի կամավոր խնդիրների, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունների և դրանց լուծման իրականացման կարգը սահմանելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի գլխավոր մասնագետ-իրավաբան Սամվել Սահակյանը:

Զեկուցման մեջ նշվեց, որ հարցը քննարկման է ներկայացվել հիմք ընդունելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի և 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջները:

Զեկուցման վերաբերյալ նյութերը /հավելված-կարգ/ կցվում է սույն արձանագրությանը:

Հարցի հետ կապված ելույթ ունեցան և զեկուցողին հարցեր տվեցին Ա. Սարգսյանը, Վ. Մկրտչյանը և Ս. Օվոյանը:

Հարցերին պատասխանեցին Ս. Սահակյանն ու Թ. Շահվերդյանը:

Քվեարկության արդյունքում դեմ քվեարկեց Վ. Մովսիսյանը:

9 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 13 - *Աշտարակ համայնքում ընտանի կենդանիներ պահելու և հաշվառելու կանոնները հաստատելու մասին*

Օրակարգային հերթական հարցը ներկայացրեց Սամվել Սահակյանը և նշեց, որ հարցը քննարկման է ներկայացվում հաշվի առնելով մի շարք հանգամանքներ, որ տարիների ընթացքում ի հայտ են եկել և պարբերաբար ստացել տարբեր սրացումներ /կենդանիներ պահելու և հաշվառման կանոնները հավելվածի տեսքով կցվում է արձանագրությանը/:

Հարցի հետ կապված իրենց նկատառումները հայտնեցին Ս. Օվոյանն ու Ա. Հունանյանը:

Ելույթներից հետո լրացուցիչ պարզաբանումներ տվեց Ս. Սահակյանը:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 14 - *Աշտարակ համայնքի ավագանու 08.10.2015թ. թիվ 1-Ա, 21.12.2015թ. թիվ 8-Ա, 28.12.2015թ. թիվ 1-Ա, 13.12.2016թ. թիվ 8-Ա որոշումների քվեարկությունները մասնակի անվավեր ճանաչելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի գլխավոր մասնագետ-իրավաբան Սամվել Սահակյանը:

Ս. Սահակյանը նշեց, որ ավագանու 08.10.2015թ. թիվ 1-Ա, 21.12.2015թ. թիվ 8-Ա, 28.12.2015թ. թիվ 1-Ա և 13.12.2016թ. թիվ 8-Ա որոշումների ընդունման ժամանակ անցկացված քվեարկություններում արձանագրված սխալները կրում են զուտ տեխնիկական բնույթ և այժմ դրանք մասնակի անվավեր ճանաչելու դեպքում որոշումները մնում են ուժի մեջ:

Զեկուցողն առաջարկեց նշված անձանց այժմ չմասնակցել քվեարկությանը:

Հարցի հետ կապված ելույթ ունեցավ և որոշակի հարցեր բարձրացրեց Ս. Օվոյանը:

Հարցերին պատասխանեցին Ս. Սահակյանն ու Թ. Շահվերդյանը:

Քվեարկությանը չեն մասնակցել Ն. Պետրոսյանը, Վ. Մկրտչյանը, Ա. Հունանյանը և Տ. Գալստյանը:

6 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն -15 - *Աշտարակ համայնքի ավագանու 25.04.2008թ. թիվ 12/1-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին*

Հարցը ներկայացրեց Սամվել Սահակյանը և նշեց, որ հարցը քննարկման է ներկայացվել նախկինից եկած սխալն ուղղելու համար:

Նա առաջարկեց, ղեկավարվելով <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ա/ ենթակետի պահանջներով, արված առաջարկությունը պաշտպանել:

Որոշակի հարցեր ճշտելու համար զեկուցողին հարցեր տվեցին Ս. Օվոյանը, Ա. Սարգսյանը և Ն. Պետրոսյանը:

Բարձրացված հարցերին տրվեցին սպառիչ պատասխաններ:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն -16 - *Աշտարակ համայնքի ավագանու 13.12.2016թ. թիվ 1-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին*

Օրակարգային վերջին հարցը ներկայացրեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շանթ Վահանյանը:

Նա առաջարկեց հավելավճար ստացողների ցանկում ավելացնել նաև Մարինե Սարդարյանի անունը, ամսական նրան տալով 20.000 ՀՀ դրամ հավելավճար:

Ելույթ ունեցավ Ս. Օվոյանը և առաջարկեց հաստատել արված առաջարկությունը:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2017 թվականի սեպտեմբերի 7-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ	ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ	ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ	ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ	ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԳՐԻԳՈՐ ԴԱՏՈՒՄՅԱՆԸ
ՏՊ
Ա.Հ.